

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամսագրիս վերջին մարտի թիւով հաղորդագրութիւն մը տուած էինք, Ս. Սթո-  
ռոյ տազնապին առնչութեամբ տեղի ունեցած վերջին անցուղարձերու մասին:

Նոյն հաղորդագրութեան թուականէն ետք, մարտ 29ին, Յորդանանի Կառավա-  
րութեան Ներքին Գործոց Վսեմապատիւ Նախարարը, Պր. Զալահ էյ Մատաոհա, յառ-  
կապէս երուսաղէմ եկաւ եւ Քաղաքիս Կառավարչատունը կանչեց Ամեն. Տ. Տիրան Ս.  
Արքեպիսկոպոսը եւ Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհաճեանը, որոնք կէսօրէն առաջ ո-  
րոշեալ ժամին ներկայացան Վսեմ. Նախարարին, իրենց հետ ունենալով Վանքին Աւագ  
Թարգման Հոգ. Տ. Վազգէն Աբեղան եւ քաղաքիս երեւելի ազգայիններէն չորս անձեր  
(Պրք. Մելքոն Պապիկեան, Հաննա Նազար, Հաննա Թապուրեան եւ Նուպար Արսէնեան)  
ինչպէս նաեւ Պատրիարքարանի Դիւանատան քարտուղարը:

Կառավարչատան մէջ, Վսեմ. Նախարարին հետ ներկայ էին նաեւ երուսաղէմի  
Նահանգին Ընդհ. Կառավարիչը, անոր փոխանորդը, երուսաղէմի Ընդհ. Ոստիկանապետը  
եւ անոր փոխանորդը, եւ ուրիշ զինուորական սպայ մը:

Վսեմապատիւ Նախարարը Կառավարութեան անունով ներկաներուն հաղորդեց,  
բերանացի կերպով, Պատրիարքարանիս վերաբերմամբ որոշում մը՝ որուն բովանդակու-  
թիւնն էր հետեւեալը: —

ա) Տիրան Արքեպիսկոպոսի արտաքսման համար Կառավարութեան կողմէ հան-  
ուած հրամանը վերանկատման ենթարկուած եւ յետս կոչուած է: Հետեւաբար ան ար-  
տօնութիւն ունի երկրին մէջ մնալու ըստ օրինի, առանց պատրիարքի պաշտօն վարելու:

բ) Եղիշէ Եպիսկոպոս ներկայիս պաշտօնազուրկ եղած եւ Միաբանութիւնէ  
վտարուած ըլլալով, Կառավարութիւնը արգիլած է անոր մուտքը վանքէն եւ քաղա-  
քէն ներս:

գ) Սուրէն Եպիսկոպոս պիտի վարէ Պատրիարքարանի վարչական գործերը իբրեւ  
Գործավար կամ Փոխանորդ Պատրիարքարանի(\*):

Այս հաղորդումը լսելէ ետք, ներկայ ազգայիններէն մէկ երկու հոգի Վսեմապա-  
տիւ Նախարարին մի քանի հարցումներ ըրին ինչ ինչ մանր առկախ խնդիրներու մասին,  
որոնց պատասխանեց Նախարարը:

Ապա Սուրէն Արքազան հարցուց անոր թէ արդեօք ուրիշ հրաման մը ունի՞: Երբ  
Վսեմ. Նախարարը ըսաւ թէ ուրիշ ըսելիք մը չունի, Արքազանները եւ իրենց ընկերա-  
ցողները հրաժեշտ առին ներկաներէն եւ վանք վերադարձան:

Կառավարութեան այս հաղորդումը յաջորդ օրը հրատարակուեցաւ տեղական Էլ  
ձէ:— կէս-պաշտօնական Արաբերէն թերթին մէջ: Պէշրուի Ն-ը-ը Արաբերէն թերթին  
ալ նոյն թուականաւ Արաբական Լրատու Գործակալութեան կողմէ հաղորդում մը հրա-  
տարակեց խնդրոյն մասին:

Կառավարական վերոյիշեալ հաղորդումին վրայ՝ Հայոց երուսաղէմի Պատրիար-  
քութեան Փոխանորդ Գեր. Տ. Սուրէն Եպիսկոպոս 3 ապրիլ թուականաւ շրջաբերական  
մը զրկեց Միաբանութեան անդամներուն, ծանուցանելով անոնց Ներքին Գործոց Վսե-  
մապատիւ Նախարարին հաղորդումին բովանդակութեան մասին, յայտնելով թէ պար-  
տականութիւն կը նկատէ Կառավարութեան կամքին համակերպիլ:

Հետեւաբար ներկայիս Պատրիարքարանի վարչական գործերուն պատասխանա-  
տուութիւնը ստանձնած է Գեր. Տ. Սուրէն Եպիսկոպոս, որ կը կատարէ իր պաշտօնը  
Ս. Սթոռոյ Տնօրէն Ժողովոյն անունով եւ Պատրիարքական Փոխանորդի կամ Գործա-  
վարի հանգամանքով:

Իսկ Ամեն. Տ. Տիրան Արքեպիսկոպոսը կը պահէ իր նախագահի հանգամանքը  
ծիսական եւ արարողական եւ այլ ոչ-վարչական պաշտօններու եւ գործերու մէջ:

Կր սպասուի Յորդանանի իմաստուն եւ արդարակորով Վեհափառ Թագաւորին  
բարեհաճութեան՝ Ս. Սթոռոյ տազնապին վերջնական լուծման եւ պատրիարքարանի  
օրինական գործերուն կանոնաւորման համար:

30 մայիս 1958

ԳԻԻԱՆ Ս. ԱԹՈՌՈՅ

Հայոց Պատրիարքութեան երուսաղէմի

(\*) Պատրիարքարանի Սահմանադրութեան համաձայն ընտրուած պատրիարքը ճանաչուելու իրաւաստիքը կը  
պահպանի Յորդանանի Վեհափառ Թագաւորին: Իսկ ընտրուած տեղապահի ճանաչման իրաւաստիքը կը վերա-  
բերի Ներքին Գործոց Նախարարին: